ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
« ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/9 » ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք.Կապան

«14» «ապրիլ» 2021 թ
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վիրաբ Մանասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Բալայան Նունե
Բախշյան Անուշ
Հանձնաժողովի քարտուղար՝ Գրիգորյան Սահականուշ

1. Գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով գնահատման արդյունքներում առկա անճշտությունները, որոնք հայտնաբերվել են ընտրված մասնակից ճանաչելուց հետո, որոշեց № 41 և 80 չափաբաժինների համար առաջարկված հայտերը վերագնահատել:
№ 41 և 80 չափաբաժինների համար «ԷՖԲԻԷՅ»ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով պահանջվող ապրանքների տեխնիկական բնութագրերին.

Չափաբաժնի համարը	Հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագիրը	Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը
41	Ախտահանիչ խտանյութ, որը պարունակում է ՉԱՄ և 3-րդային ամոնիումիային միացություններ և այլ օժանդակող նյութեր:Ազդում է գրամդրական և գրամբացասական մանրէների / յադ թվում նաև տուբերկուլյոզի և ներհիվանդանոցային վարակների հարուցիչների/, վիրուսների /ներառյալ ներառյալ արտաընդերային և ընդերային հեպատիտների, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտ/, ախտածին սնկերի / նաև կանդիդա, բորբոսասնկերի/ վրա:Օգտագործվում է բժշկական գործիքների, ներառյալ վիրաբուժական,էնդոսկոպերի և նրա մասերի, ախտահանման և նախամանրէազերծումային մաքրման համար/ բարձր մակարդակի ախտահանումից առաջ/:Գործարանային փաթեթավորումը առնվազն 1 լ-ոց տարայով:	Մասնակիցը հավելված 1.1-ում առաջարկել է «Ալմադեզ»ախտահանիչ միջոցը, որի ազդող նյութը դիքլորիզոցիանուրային թթվի նատրիումական աղն է, չնայած որ հավելված 1"1-ի «տեխնիկական բնութագրերը»սյունակում ներկայացրել է հրավերում ներառված տեխ"բնութագիրը:
80	Խտանյութը պարունակում է 20% գլյուտարալդեհիդ, այլ օժանդակ նյութեր: Ախտահանիչ լուծույթը պետք է ունենա մանրէասպան ազդեցություն գրամդրական և գրամբացասական մանրէների /այդ թվում նաև տուբերկուլյոզի միկրոբակտերիաների, ներհիվանդանոցային վարակների և անաէրոբ միկրոբակտերիաների/, վիրուսների /այդ թվում պոլիոմիէլիտի,ադենովիրուսների, գրիպի վիրուսի/ , ախտածին սկների նկատմամբ՝ ինչը պետք է հաստատված լինի ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով: Ցուցված է բոլոր վիրաբուժական և բժշկական գործիքների, ներառյալ ստոմատոլոգիական և վիրաբուժական գործիքների, ջերմազգայուն գործիքների և էնդոսկոպիկ սարքավորումների **բարձր մակարդակի ախտահանման և մանրէազերծման համար:**	Մասնակիցը հավելված 1.1-ում առաջարկել է «Ալմադեզ»ախտահանիչ միջոցը, որի ազդող նյութը դիքլորիզոցիանուրային թթվի նատրիումական աղն է, չնայած որ հավելված 1"1-ի «տեխնիկական բնութագրերը»սյունակում ներկայացրել է հրավերում ներառված տեխ"բնութագիրը:

ուստի հանձնաժողովը որոշեց մերժել «ԷՖԲԻԷՅ»ՍՊԸ-ի հայտը՝ նշված չափաբաժինների համար և գնահատել «անբավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0

2. Հանձնաժողովը որոշեց, հաշվի առնելով գնահատման արդյունքները, ընտրված մասնակից ճանաչել.

№ 41 չափաբաժնի համար «Խաչպար»ՍՊԸ-ին,

№ 80 չափաբաժնի համար «Բիո-Քիմ»ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Մանասյան Վիրաբ _____

Հանձնաժողովի անդամներ՝ Բալայան Նունե _____

Բախշյան Անուշ _____

Հանձնաժողովի քարտուղար՝ Գրիգորյան Սահականուշ _____